

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՕՐԱԿՑԵԼՈՒ ԿՈՉ ՈՐԴՆԵԼՈՎ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԻՆ

ՇԷՅԻՆ ԻՍՐԱՆ ՀԻՒՄԷՅՆ «ՊԵՏՔ Ե ՈՐՈՇԵԼ՝ ՈՎ Է ՃՆՇՈՂ ԵՆ ՈՎ Է ՃՆՇՈՒՈՂ ԵՆ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՁ»

Գիտնական, փիլիսոփայ շեյխ Իմրան Յիսեյն՝ անդրադառնալով Արցախի վրայ կատարուող հակահայ յարձակումներուն, կոչ ուղղեց իսլամական աշխարհին՝ զորակցելու «Հայաստանի եւ Ազրայեյանի միջեւ պատերազմի ճիշդ կողմին՝ հայերուն»։ «Հարկ է որոշել՝ ո՞վ է ճշողը եւ ո՞վ է ճնշողը այս պատերազմին մէջ», ընդգծեց շեյխ Յիսեյն։ Ան կոչ ուղղեց՝ պատժելու արեւմտեւ Ալիքը, անոր գլխատրած կառավարութիւնը անաստուած որակելով։

Իր կոչին մէջ իսլամ գիտնականը կը շէշէ, որ հայերը շատ տառապած են, եւ թէ ինք ներկայիս կը կարողայ Հայոց ցեղասպանութեան մասին գիրք մը։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ԿԱՅՈՒՄԵՅՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄՏՏՈՒՅԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻՆ ԵՒ ԻՐ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԿԻՆ



Պաշտօնական այցելութեամբ Հայաստան գտնուող Յունաստանի արտաքին գործոց նախարար Նիքոս Տեւսոփաս հանդիպումներ ունեցաւ Հայաստանի նախագահին, վարչապետին, արտաքին գործոց նախարարին հետ, որուն հետ տուաւ մամուլի ասուլիս մը, ինչպէս նաեւ այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր։

Շար.ը՝ էջ 4

«ՊԱՔՈՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ, ՈՒՍԻՄԱՅԷՆ, ՎՐԱՍԱՆԷՆ ԵՒ ԻՐԱՆԷՆ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԶԷՆՔԻ ՄԱՔԱՆԵՆԳՄԱՆ ՄԱՍԻՆ»

Կ'ԸՍԵ ԱԼԻԵՒ

Ազրայեյանի նախագահ Իլհամ Ալիեւ երկէ յայտնած է, որ Պաքու տեղեկութիւններ ունի, թէ Ռուսիայէն քաղաքային օդանաւերով կը հասնին զենքեր երեւան։ Ան նշեց, որ ռուսական պաշտօնական կողմեր իրեն վստահեցուցած են, թէ Հայաստանի զէնք չեն մատակարարեր։ Այս մասին կը հաղորդէ «Սփոթիք»-ը։

Շար.ը՝ էջ 2

ԲՐԻՏԱՆԻԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒ ԹԻՐԱՆԱՌՈՐՈՒՄԸ



Բրիտանիան կը դատապարտէ ազրայեյանական-արցախեան տագնապի գոտիին մէջ ծայր առած պատերազմին ընթացքին քաղաքացիական բնակավայրերու թիրախաւորումը։ «Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ այս մասին ԵԱԳԿ-ի Մնայուն խորհուրդի նիստին ըսած է Բրիտանիոյ պատուիրակութեան փոխղեկավար Նիքոլայ Միլոբեյ։

Շար.ը՝ էջ 2

ՈՒՍԻՄԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՉԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒՆ ՄԷՁ ԱՊՇԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԷՆ ՀԻՍՄՍ



Կասպից ծովուն մէջ ռազմափորձերու սկսած են ռուսական վեց նաւեր, եօթը օդանաւեր եւ անլի ջան 400 զինուորներ։ «Արմէնփրէս» կը հաղորդէ, որ երկէ այս մասին յայտնած են Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութենէն։

Շար.ը՝ էջ 4

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԽԻՉԱԽՕՐԷՆ ԵՏ ՄՂԵԼ ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ

Երեկ՝ ուրբաթ, 16 հոկտեմբերին, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան մամուլի ասուլիսի մը ընթացքին տեղեկացուց, որ Արցախի եւ Ազրայեյանի հակամարտ գործերու շփման գիծին մէջ երեկոյեան եւս կը շարունակուին դժուար ու ծանր մարտերը, յատկապէս՝ հարաւային ուղղութեամբ, անլցնելով, որ Նոյն օրը կանուխ ժամերուն Ազրայեյանի զինուած ուժերը եւ ԻԻԼԻՍԻ, եւ հարաւի մէջ երկար հրետակոծումէ ետք, որուն ընթացքին կիրարկուած են նաեւ այլ օդային յարձակման միջոցներ՝ անօդաչու թռչող սարքեր, հրթիռներ, օդուժ, անցած են լայնածաւալ յարձակման։ Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը նշեց, որ օրուան ընթացքին ազրայեյանական օդուժը կատարած է նաեւ որոշակի թռիչքներ, իսկ հայկական կողմը կրցած է չեզոքացնել որոշ թռչող սարքեր։

Յովհաննիսեան ըսաւ, որ 15-16 հոկտեմբեր լուսնոյ գիշերը, յատկապէս լուսադէմին, թշնամին հրետանիի գործածութեամբ սաստիկ կրակ բացած է Մարտունի քաղաքի եւ Կարմիր Շուկայ բնակավայրի ուղղութեամբ, իսկ առաւօտեան՝ Բերդաշէն համայնքին ուղղութեամբ։ Ռմբակոծուած են Հատուկ շրջանի Տոյ, Զաշաթաղի շրջանի Տիգրանաւան, Այգեհովիտ եւ Աղանոյ բնակավայրերը, իսկ անլի ուշ՝ Ստեփանակերտը։

16 հոկտեմբերի ուշ գիշերին ազրայեյանական անօդաչու թռչող սարքեր թռիչքներ կատարեցին Հայաստանի Սիւնիքի մարզի կարգ



մը շրջաններու ուղղութեամբ եւ հարուածեցին Հայաստանի զինուած ուժերու ենթակառուցներ՝ վնասելով նաեւ քաղաքացիական կառույցներու։

Շար.ը՝ էջ 2

ԱՆՆԱԽԱԳԷՊ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐ ՀԱՅԵՐԸ ՓԱԿԵՑԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՆԵՐԸ՝ «ԱՐՑԱԽԸ ՀԱՅԱՍՏԱՆ Է՛» ՊԱՍՏԱՌՆԵՐ ԲԱՐՉՐԱՅՈՒՑԱԾ

Եւրոպայի հայերը նախածեռնած են աննախադէպ բողոքի ցոյցերու՝ ընդդէմ Ազրայեյանի եւ Թուրքիոյ յարձակողապաշտութեան եւ յանուն Արցախի ճանաչումին։ Անոնք փակած են Եւրոպայի միջպետական ճամբաները։

Հարիւրաւոր ցուցարար հայեր երկու ուղղութիւններով փակած են Ֆրանսա-Պելճիք միջպետական ճամբան առաւօտեան կանուխ ժամերէն՝ Եւրոպայի ուշադրութիւնը Արցախի տագնապին վրայ սեւեռելու նպատակով։ Յոյցին մասնակցողները բարձրացուցած են պաստառներ, որոնք վրայ գրուած էր «Արցախը Հայաստան է՛»։

Ճամբան 1 ժամ փակ պահելէ ետք շարժումին մասնակիցները յայտնած են, որ ինքնաշարժներով պիտի ուղղուին դէպի Եւրոպական խորհրդարան։

Չուզահեռաբար փակուած են նաեւ Ֆրանսա-Սպանիա, Պելճիքա-Նետերլանտներ, Ֆրանսա-Չեխիացիներ, Նետերլանտներ-Գերմանիա, Լիքսամպուրկ-Պելճիքա-Ֆրանսա, Ֆրանսա-Իտալիա, Գերմանիա-Դանիա միջպետական ճամբաները։


Շար.ը՝ էջ 4



ՈՒՍԻՄՈՅ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԵՏ ՓՈՒԹԻՆ ՔՆՆԱՐԿԱԾ Է ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԱՌՆՉՈՒՄԸ ԿԱՅՈՒՄԵՅՆ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի Մնայուն անդամներուն հետ ընկարկած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը։ Այս մասին հաղորդեց «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տիլիթի Փետրովին։

Շար.ը՝ էջ 2



ՄԱՔՐՈՆ. «ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԱՌՉԱԾ Է ԱՅՆ ՏԵՍԱԿԵՏԻՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԾՈՒՏՈՎ ԶԻՆԱԳԱԳԱՐ ՊԵՏՔ Է ՀԱՍՏԱՏՈՒԻ»

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտարարած է, որ Եւրոպական Միութիւնը կը շարունակէ կառչած մնալ այն տեսակետին, որ Հայաստանի եւ Ազրայեյանի միջեւ պետք է կարելի եղածին չափ շուտ զինադադար հաստատուի։

«Ռոյթըրզ» կը հաղորդէ, որ Մաքրոն նաեւ յայտնած է, թէ Եւրոպական

Շար.ը՝ էջ 4



«ՄԵՐ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ ԶԿԱՅ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՄԷՁ ՀԱՊԿԻ ԽԱՂԱՂԱՊԱԿՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՒԵԼՈՒ ՀԱՐՑ»

Կ'ԸՍԵ ՀԱՊԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԿԱՐԱՐ

ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղար Սթանիսլաւ Չաս յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղի մէջ կացութեան կարգաւորման համար ՀԱՊԿ-ի խաղաղապահները ներգրաւելու հարցը այժմ օրակարգի վրայ չէ։ Այս մասին կը հաղորդէ պիեթրոսական «Պելթա» կայքը։



Շար.ը՝ էջ 4

ԱՄՏԻՐՈՅ ԽՈՐՀՐԿԱՐԱՆԸ ՄԵՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՐՑԱԽԻ ՄԷՁ ԹԻՔԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆ ՈՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԶԻՆԱՊԵՐԴԻ ՀԱՅԹԱՅՈՒՄԸ

Աւստրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ դատապարտեց Արցախի մէջ թրջական միջամտութիւնն ու անոր կողմէ Ազրայեյանի զինամթերքի հայթայթումը։

Շար.ը՝ էջ 4

ԻՐԱՆՑԻ ԶՕՐԱՎԱՐԸ ՅԱՅՏՆԱԾ Է ԹԵՀՐԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ԱՀԱԲԵԿԻԶՆԵՐՈՒ ԳԷՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Իրանի Յեղափոխության պահակազույգի հրամանատար, զորավար Ռալիմ Նոյե Եղտամ խոսած է այն մասին, որ արդեօ էրան պատրաստ է միջամտելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության: Յուրադար 2020-ին ամերիկեան օդուժի նպատակաուղղուած հարուածին իբրև հետեանք սպանուած իրանցի զորավար Թասեմ Սիւլեյմանիի մտերիմ ընկերը, որ Սիւլեյմանիի կողքին պատերազմած է Իրաքի եւ Սուրիոյ մէջ, այս մասին խօսած է ռուսական «Փոլիթեքսփորթ»-ի յատուկ թղթակիցին հետ հարցազրոյցի մը ընթացքին:

Որքանով հաւանակալ է, որ ահաբեկիչները գան Կովկաս, իսկ այդ պարագային ինչպէ՞ս պիտի վարւի Իրանը հարցումին պատասխանելով՝ իրանցի զորավարը կ'ըսէ, որ Սուրիոյ մէջ հակամարտութեան ժամանակ Թեհրան շտապած է օգնել ահաբեկիչներու դէմ պայքարին, որպէսզի նաեւ ապահովէ իր երկրին պաշտպանութիւնը: «Եւ եթէ Ազրայէճան կամ Բայաստան որոշեն օգտուիլ այդ ուժերէն, Իրան առաջինը պիտի ըլլայ, որ պիտի երթայ այդ զինեալներուն դէմ եւ պիտի ոչնչացնէ զանոնք: Մենք լոյսալէս ունինք տեղեկութիւն, որ ՏԱԳԵԸ խմբաւորումէն մարդկութեան թշնամիները կը մեկնին Կովկաս, եւ ատիկա կը սպառնայ տարածաշրջանին անվտանգութեան: Թող իմանան, որ մենք պիտի չարտօսենք նեղ ծրագիրներու իրագործում», յայտարարած է զօրավարը:

ԻՐԱՆԵԱՆ ԳՈՐԴՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ ԳՐԹԻՈՒՆԵՐ ԻՆԿԱՍ

«ԹԵՀՐԱՆ ԱՆՏԱՐԲԵՐ ՊԻՏԻ ԶՄՆԱՅ»

ԿԸ ԳԱՍՏԱՏԷ ԽԱԹԻՊԶԱՏԷ

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Սաաիտ Կարթապատ յայտնեց, թէ Լեռնային Ղարաբաղի մէջ ընթացող բախումներուն պատճառով իրանեան սահմանին վրայ իրթիշներու իյնալը «անընդունելի է»՝ հերքելով սահմանամերձ շրջաններու թիրախարման իրանեանի կողմի հակադրածութեան վերաբերող տարածայնութիւնները: Կարթապատը հարցազրուիչին մը իրապարակելով յայտնեց, թէ սահմանամերձ շրջաններու մէջ

բնակող իրանցի քաղաքացիներու ապահովութիւնն ու անվտանգութիւնը «կարմիր գիծ» է: «Ռմբակոծումը կրկնուելու պարագային Իրան անտարբեր պիտի չմնայ», աւելցուց Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը: Իրանեան ԻԻՆՍԸ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ իրանեան սահմանամերձ շրջաններուն մէջ ինկած իրթիշներուն պատճառով իրանցի տարեց քաղաքացի մը վիրաւորուած է:

ԱՆՆԱՍՏԱՆԻ ՊՐՈԳՆՈՒՄ ԶՈՅՑԵՐ. ՀԱՅԵՐԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Գերմանիայի Զամպուրկ քաղաքի հայերը փակած են Նաւահանգիստ տակող ճամբան՝ ի նշան բողոքի ընդդէմ Ազրայէճանի եւ Թուրքիոյ յարձակումին եւ յանուն Արցախի ճանաչման: Անոնք ուզած են միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել Արցախի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն վրայ:

Միացեալ Նահանգներ բնակող հազարաւոր հայեր եւ օտարներ, որոնք կը սատարեն հայ ժողովուրդին, 15 հոկտեմբերին բողոքի ցոյց կազմակերպած են Ուաշինկթընի մէջ՝ Քոնկրէսի շէնքին դիմաց, եւ դատապարտած են Ազրայէճանի եւ Թուրքիոյ կողմէ Արցախի եւ Զայաստանի դէմ սանձազերծուած ռազմական գործողութիւնները:



Անոնք հանդէս եկած են «Դարդեցուցէ՛ք ցեղասպանութիւնը», «Դարդեցուցէ՛ք ահաբեկութիւնը», «Էրտողան՝ ահաբեկիչ», «Ալիե՛ն՝ ահաբեկիչ», «Արցախը Զայաստան է», «Մենք խաղաղութիւն կ'ուզենք» եւ այլ գերմաներէն ու հայերէն վանկարկումներով:



ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակին մօտ խումբ մը քաղաքացիներ բողոքի ցոյց կազմակերպեցին՝ պահանջելով անտարբեր ըլլալ Արցախի մէջ տեղի ունեցող դէպքերուն նկատմամբ ու յստակ քայլերու ձեռնարկել Ազրայէճանի կողմէ սանձազերծած յարձակումը դադարեցնելու ուղղութեամբ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՅԵՑ ...

Շարունակուած Ա. Էջէն

Յունաստանի արտաքին գործոց նախարարը վարչապետ Սիկոլ Փաշինեանին հետ հանդիպումին ընթացքին Տենտիաս փոխանցեց Յունաստանի վարչապետին ողջունները եւ աջակցութեան խօսքերը: Ան կ'ըսէ, որ Յունաստան կողմակից է Արցախի մէջ զինուորական գործողութիւններու անյապաղ դադարեցման: Սիքոս Տենտիաս ընդգծեց, որ Յունաստան կը դատապարտէ ռազմական գործողութիւնները իրահրող արտաքին միջամտութիւնները եւ կը սատարէ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համակարգած հետեւումը՝ գինարդարող պահպանելու եւ բանակցային գործընթացը վերականգնելու կոչին:

Գերմանիայի արտաքին գործոց նախարարը անորդարձան Թուրքիոյ ապակայունացող ծաւալապաշտական քաղաքականութեան, որ կը դրսեւորուի տարբեր տարածաշրջաններուն մէջ: Անոնք ընդգծեցին նման քաղաքականութեան անընդունելիութիւնը եւ միտքեր փոխանակեցին անոր հակազդելու ուղղութեամբ համատեղ կատարելիքներուն շուրջ:

Զանրապետութեան նախագահին հետ հանդիպումին ընթացքին եւս, հայ-յունական յարաբերութիւններու կարեւորութեան անդրադառնալով ետք, լուսարձակի տակ առնուեցան Ազրայէճանի սանձա-

զերծած յարձակումները, Զայաստանի տարածքին նկատմամբ կատարուած ոսնձգութիւնները, զինադադարի վերաբերեալ ձեռք բերուած համաձայնութիւնը եւ զայն պահպանելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ Ազրայէճանի կողմէ զայն մայրու կերպով խախտելու իրակասութիւնը:

Զայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մաացականեանի հետ հանդիպումի արարտին տեղի ունեցած մամլոյ ասուլիսին ընթացքին վերջինը դիտել տուաւ, որ Արեւելեան միջերկրականն ու Կովկասը ներկայիս կը բախին Նոյն սպառնալիքին, որուն դրդապատճառը Թուրքիոյ ծաւալապաշտական քաղաքականութիւնն է:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ Յունաստանի արտաքին գործոց նախարարը կարեւոր նկատեց, որ միջազգային հանրութիւնը յստակ տարբերակէ անոնք, որոնք իւր կը թափեն լարման կրակին վրայ եւ անոնք, որոնք կ'որդեգրեն կառուցողական մօտեցում ու հաւատարիմ կը մնան վեճերու լուծման իրադր տարբերակին հաւատարիմ:

Յունաստանի արտաքին գործոց նախարարը 16 հոկտեմբերին այցելեց Փիժեռնակաբերդի յուշահամալիր եւ յարգանքի տուրք մատուցեց Զայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Յիշատակն արդարուն օրհնութեամբ եղիցի:

ԳՈԿՏ. ՅԱՐԹԻԹԻՆ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ՅԵՏԱՀՈՒ ՄՏԱՅԱԻ ԼԻՔԱՆԱՆԻ ...

Շարունակուած 3-րդ էջէն

Լիբանանի նախագահը կը ներկայացնէր Իպրահիմ Զանանան, խորհրդարանի նախագահին ու վարչապետին ներկայացուցին էր Իպրահիմ Ազար, իսկ Սեզար Ապի հալիլ՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, Երեսփոխան ժըպրան Պաւլի: Ներկայ էին նաեւ Երիտարարութեան եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնակատար Վարդիսէ Օհանեան-Գեորգեան, Երեսփոխաններ Յակոբ Թերզեան եւ Ալեքսան Մաթոսեան: Յուրաբարութեան արարողութեան ընթացքին

Նախագահ զօր. Միշել Աունի անունով յետմահու Լիբանանի «Արժանեաց շքանշան» տրուեցաւ դոկտ. Յարութիւն Սամուէլեանին՝ լիբանանեան դրամատուրգ-նային եւ դրամական բնագաւառին մէջ անոր ունեցած դերակատարութեան համար, իսկ Արամ Ա. Կաթողիկոս Աթոյի Տանն Կիլիկիոյ «Կիլիկեան Ապետ»-ի շքանշանով պարգեւտրեց զայն՝ ազգային կեանքին մէջ անոր ունեցած ներդրումին համար: